

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ. ՏԱՐԱԳԻՐ ՄԵՆԱՎՈՐԸ
(ԿԱՀԻՐԵԻՑ ԿԱՀԻՐԵ)

*«Դուն որ եղար, ո՛վ Պոլիս, լոյսն աչքերուս նորաբաց
ճի շտ է, ըսէ, որ ա՛լ մենք օտարնէ ը ենք իրարու...»:*

(Վահան Թեքեյան)

Բանալի բառեր – Հայաստան, Կահիրե, տարագիր, սփյուռքահայ գրականություն, ժողովածու, ազգային գործիչ, խմբագիր, մանկավարժ, բանաստեղծություն, կարոտ, ձուլում, տառապանք, հիվանդություն

Վահան Թեքեյանի կյանքի ընթացքը սփյուռքում ևս խաղաղ չանցավ: Հեռանալով Կ. Պոլսից՝ Թեքեյանը շուրջ երեք ամիս ապրում է Վառնայում (Բուլղարիա), աշխատակցում է ԱՄՆ-ում լոյս տեսնող «Հայաստանի կոչնակին»:

Բուլղարիայից Ա. Չոպանյանին ուղղված 1923 թ. հունվարի 18 թվակիր նամակում Թեքեյանը գրում է. *«Լօզանը կ'երեւի թէ բոլորովին թաղեց մեր խնդիրը, եթէ նոյն իսկ պզտիկ ճեղք մը բաց թողուած է... պէտք չէ, որ ատով ինքզինքնիս խաբենք...»*¹: Թեքեյանը այնուհետև գրում է, որ պէտք է լրջորեն մտածել մեր անելիքների մասին, *«որ ամէն պարագայի մէջ չի կրնար մինչեւ հիմա մեր ըրածին նմանը ըլլալ»*, որը նշանակում էր ծավալել գործունեություն՝ բոլորովին նոր մոտեցումներով, և նոր վերաբերմունք դրսևորել թե՛ ազգային և թե՛ կուսակցական ասպարեզներում*: Թեքեյանը 1923 թ. մարտին անցնում է Հունաստան (Աթենք, ապա՝ Գորֆու) հայ որբերի վիճակով զբաղվելու համար, համագործակցում որբանոցում որպէս ուսուցիչներ աշխատող Թեոդիկի, Չիֆթե-Սարաֆի, Արշ. Ալպոյաճյանի և այլոց հետ: Փարիզի ազգային պատվիրակության նորընտիր նախագահ Գաբրիել Նորատունկյանի հանձնարարությամբ մասնակցում է «Հայ որբերի պաշտպանության ընկերության» հիմնմանը, փորձում դպրոց բացել, մի քանի հայ որբերի ուղարկում է Եվրոպա՝ ուսանելու, նրա ջանքերով հայ ընտանիքները սկսում են

¹ Թեքեյան Վ., Նամականի, Լոս Անջելոս, 1983, էջ 220: (Այս գրքից հետագա հղումները այսուհետև կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջերը):

* Երկարատև բանակցություններից հետո՝ 1923 թ. հուլիսի 24-ին է ստորագրվել Լոզանի կոնֆերանսի դաշնագիրը, որը ի չիք դարձրեց Սևրի հայանպաստ որոշումները:

ապաստան տալ տասնյակ գաղթականների ու որբերի, ստեղծում է օգնության դրամագլուխ:

Թեքեյանը այստեղ վերջնականապես համոզվում է, որ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական որբանպաստ կազմակերպությունները անում են ամեն ինչ հայ մանուկներին ձուլման ենթարկելու համար: Աթենքից Ա. Չոպանյանին հասցեագրված մի նամակում Թեքեյանը գրում է՝ «... *պիտի փճանան* (որբերը – Ա. Ա.) *ամերիկացուց ձեռքը*», հայտնում այն միտքը, որ եթե ազգը «...*այսօր իր որբերը իբրև հայ չհոգայ եւ չկրթէ, ազգը վաղը ինքը որբ պիտի մնայ...*» (էջ 224-225): Ամռանը (հուլիսին) Թեքեյանը մեկնում է Եգիպտոս, կուսակցական հարցերով այցելում Լիբանան, Սիրիա, ապա անցնում Ֆրանսիա (Մարսել, Փարիզ):

Փարիզում թեև Թեքեյանը շարունակում է ստեղծագործել ու զբաղվել կուսակցական-հասարակական գործերով և գաղթականների հարցերով, սակայն ամուրի ու միայնակ մարդու նրա ապրած 45 տարիները, սփյուռքահայ կյանքի օրավար ավելացող փլուզումները արդեն իրենց զգալ էին տալիս ու նրան մղում հուսահատության գիրկը, որի գեղարվեստական արտահայտություններից մեկը եղավ նրա «Մութ ժամեր» բանաստեղծությունների շարքը: Ինչպես ինքն է վկայում, ամեն բանից իր մեջ «*տխրություն միայն դիզւեր էր*»: 1923 թ. դեկտեմբերին Ջ. Սյուրմեյանին ուղղված նամակում նա գրում է. «... *գիտեմ թէ ինչ բան զիս կրնար փրկել եւ գիտեմ նաեւ, թէ այդ բանը պիտի չունենամ երբեք*» (էջ 252): Շարունակելով խոսել իր հոգեկան ծանր կացության մասին՝ նույն նամակում գրում է. «*Տարօրինակ բան. միտքս միշտ հստակ է ու առույգ՝ երբ սիրտս կը մոռնամ, բայց սիրտս հետզհետեւ աւելի քիչ կրնամ մոռնալ եւ ընկճումի ամբողջ օրեր ունիմ...*» (էջ 253):

Թեքեյան-Սյուրմեյան հոգևոր հարազատության դրսևորումներից մեկը դառնում է Թեքեյանի հովանավորությամբ, խմբագրությամբ ու առաջաբանով 1924 թ. Փարիզում լույս տեսած՝ Ջ. Սյուրմեյանի «Լոյս Ջուարթ» բանաստեղծությունների գրքույկը:

1924 թ. դեկտեմբերին Թեքեյանը նորից է մեկնում Եգիպտոս (Կահիրե), ծանոթ շրջանակներից հրավեր ստանում տեղափոխվել Հայաստան (նույնանաման հրավեր նա ստանալու էր նաև 30-ական թվականների կեսերին Ջապել Եսայանից), անգամ պատրաստվում է մեկնել, սակայն «Արեւի» խմբագրապետության հրավիրվելու և այլ պատճառներով հրաժարվում է այդ մտադրությունից:

Կահիրեում գործող Ազգային քաղաքական ժողովի ատենապետի պաշտոնում երկու տարի (1924-1926 թթ.) աշխատելուց հետո Թեքեյանը ութ տարվա ընդմիջումից հետո նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, զբաղվում «Կարապետ Մելքոնյան» հիմնադրամի նվիրատվությունը Կ. Պոլսի պատրիարքարանից Հայ բարեգործական ընկերությանը փոխանցելու և նույն միությանը անցած գործատունը վաճառելու գործերով, զուգահեռ ստեղծագործում, «Հայաստանի կոչնակ» թերթի խմբագիր Հովհ. Ավագ-

յանին պատրաստակամություն հայտնում թերթին ուղարկել արձակ գրություններ, քրոնիկներ ու գրականությանը վերաբերող այլ նյութեր: Թեքեյանի համար կյանքի գերագույն առաջադրանք են դառնում սփյուռքահայ զանգվածների ազգային, հոգևոր ու գրական կյանքի կազմակերպումն ու առաջնորդումը:

1924 թ. աշնանը Թեքեյանը մեկնում է Ժնև, մասնակցում Հայասերների միջազգային լիգայի և Հայոց խորհրդակցական համաժողովի աշխատանքներին, ուր նաև քննարկվում են 50 հազար գաղթականների Հայաստան փոխադրելու, հայերի նկատմամբ աշխարհում նպաստավոր կարծիք ստեղծելու, հայոց դեմ վերջին տարիներին կատարված ողբերգական դեպքերը վեր հանելու և գաղթահայության ձուլման դեմն առնելու հարցերը: 1925 թ. Կ. Պոլսում 86 տարեկանում մահանում է Թեքեյանի մայրը՝ Եղիսաբեթը, որը նշանակում էր՝ տարագիր բանաստեղծը որքանում էր արդեն վերջնականապես (նրա ընտանիքի բոլոր անդամները՝ եղբայրները, քույրը, արդեն մահացել էին):

Թեքեյանն իր ամբողջ կյանքի ընթացքում երազել է ժամանակ ունենալ *«բանաստեղծություն, ուսումնասիրություն և վեպ գրելու»*, բայց, այդուհանդերձ, հնարավորություններ կյանքը միշտ չէ, որ տվեց: Զ. Սյուրմեյանին գրած 1925 թ. սեպտեմբերյան նամակում նա գանգատվում է իր այդ ծանր կյանքից ու մանավանդ կատարած աշխատանքներից. *«... ապուշ կեսնք մը կապրիմ. աշխատությունը գոր կը կատարեմ՝ չեմ սիրեր... տարիները կանցնին... այլևս երկար ապագայ մը չունիմ դիմացս... հիմա է ճշդիւ, որ պիտի կրնայի բան մը տալ, թողուլ ինձմէ...»* (էջ 297-298): 1926 թ. Թեքեյանը *«խոշոր հատոր մը կազմելու չափ»* հավաքած նյութեր ուներ, որոնք, սակայն, ընթերցողին ներկայացնելու հնարավորություն չունեցավ: Ու չնայած իր այդ վիճակին՝ Թեքեյանը ուշադիր էր իր շրջապատի մարդկանց նկատմամբ, հոգատար մանավանդ գրչեղբայրների հարցերում: Մ. Կյուրճյանին գրած մի նամակ ցույց է տալիս, թե ինչ սրտի ցավով է նա տարել Եր. Օտյանի առողջության վատթարացումը, և թե ինչպես նա քանիցս այցելել է Կահիրեի իտալական հիվանդանոց, ուր պառկած էր մեծ երգիծաբանը, բժիշկներին հանդիմանել պակաս ուշադրության համար*: Այս ընթացքում Թեքեյանն իր աջակցությունն է նաև ցուցաբերում 1926 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին:

Այս ամենով հանդերձ՝ Թեքեյանը ստեղծագործական առումով ևս աշխատում է իր ուժերի ամբողջ լարումով, որի մասին նա վկայում է 1927 թ. գրած իր նամակներից մեկում. *«... առտուրնէ մինչև իրիկուն գրիչը ձեռքս եւ քրտինքը կոնակս է»*: Անասելի հուսահատության և տնտեսական ծանր

* Եր. Օտյանը մահացել է 1926 թ. հոկտեմբերի 3-ին: Գրողի թելադրությամբ Թեքեյանն է գրառել նրա կտակը:

պայմաններում նա շարունակում է գրել ոչ միայն բանաստեղծություններ, այլև հոդվածներ, նամակներ, արձակ գործեր, զանազան գրություններ, քանի որ չգրել չէր կարող և դրանով դիմակայում էր իր տառապանքներին. *«Չարմանալի է միայն, որ բնութեամբ կամ սովորութեամբ, գրելու պահուս կը հակազդեն այդ զգացումներուն եւ լրջօրեն, հավատքով կը գրեն»* (էջ 303):

1927 թ. Թեքեյանը ստանում է բարերար Պողոս Գեորգյանի առաջարկը իր նոր գրքի տպագրությանը օգնելու վերաբերյալ: Բայց քանի որ, Թեքեյանի խոսքերով ասած, *«Եգիպտոսը տարօրինակ երկիր մըն է, մարդ ուզածը չէ, որ կ'ընէ՝ այլ միշտ չուզածը»*, ինչպես այս, այնպես էլ շատ այլ ծրագրեր չեն իրականանում: Իր ծանր կացության մասին Թեքեյանը շատ ավելի դառնացած է գրում Կ. Չարյանին ուղղված 1929 թ. հունվարի 9-ի թվակիր նամակում. *«Ի՞նչ գրեմ, ինչպե՞ս գրեմ «կյանուած եմ» այն հրեշն, որ հայ եւ եգիպտահայ journalisme-ն է: Ո՛չ ժամանակ, ո՛չ ախորժակ կը մնայ ուրիշ բան ընելու, ուրիշ բանի վրայ մտածելու անգամ: ...այնքան փճացած տրամադրութեամբ գրիչը ձեռք կ'առնեն կէսօրէ վերջերը եւ, ամէն մեղքիս վրայ, գոնէ հանգիստ եւ առանձին ալ չեմ մնար գրածս միջոցին: Աշխատանքս («Արեւ»-ում – Ա. Ա.) եւ կեանքս միասին ereintement (հատնում) է եւ ուրիշ ոչինչ: Միջավայր չկայ, մարդ չկայ, եւ ի փոխարէն փիս կոփի եւ ապուշ յոգնութիւն կայ միայն»* (էջ 544-545):

Եվ իրոք, դատարկվում ու դատարկվելու էր այդ միջավայր կոչվածը, որ սփյուռքն էր ու սփյուռքահային վիճակված կյանքի ընթացքը, և որը նրան անդուլ տանում էր *«Չորնալ ուրիշ տեղ...»*.

*Ահա մասեր մի առ մի
Անւերջօրեն կը բաժնւին, կը մէկնին...
Եւ ան տակաւ կը պակսի...:
(«Մփիւոք»)*

Թեքեյանի կյանքում ոչինչ չի փոխվում նաև հաջորդ տարի: Շրջապատի անտարբերությունը շարունակվում է նրա նկատմամբ, նրան դառնություններ պատճառում, հարձակումներ է գործում մանավանդ «Պայքար» թերթը: Գրողը մի կարճ ժամանակով այցելում է Փարիզ և վերադառնում: Մեկ տարի հետո նորից է մեկնում Փարիզ՝ հույս ունենալով ձերբագատվել լարված մթնոլորտից և շատ թե քիչ հարմար աշխատանք գտնել: Գրեթե դադարում է ստեղծագործելուց, ունենում է անկման օրեր, հիասթափությունը շարունակվում է: Վատանում է նաև առողջությունը: Ոչինչ չանելու ցանկությունը տիրապետող է դառնում: *«... Հիւանդութեանս ծանրութիւնը ասոկէ կը հասկնամ: ... ես ինքզինքէս զգուած եմ...»*,– գրել է նա 1930 թ. Ա. Տատրյանին ուղղված իր նամակում (էջ 315):

Անբաժան զրկանքները նրա մեջ ծնում են անսովոր զգացողություններ. *«... զգացութիւնը ունիմ ծովուն մէջտեղ ժայռի մը վրայ ելած նաւաբեկեալի*

մը, որ ծովը նետուելով խեղդուելու կամ իր ժայռին վրա սովամահ ըլլալու անխուսափելի հարկադրանքին կը խորհի...» (էջ 317):

Գրողի հուսահատական և անկումային տրամադրությունները լավ է բնորոշվում այս շրջանում Թեքեյանի գրած *«սակալաթիվ բանաստեղծութիւններից»* մեկի առիթով Ա. Տատրյանի՝ Թեքեյանի բանաստեղծության մեջ օգտագործված *«փափուկ»* բառի փոխարեն *«ծիծղուն»*-ը օգտագործելու առաջարկին Թեքեյանի տված պատասխանով: *«Լաւ է,- գրել է Թեքեյանը,- բայց «ծիծղունը» իմ զգացումիս մէջ չէ»* (էջ 320): Այս ընթացքում հանդիպումներ է ունենում Փարիզում գտնվող Ավ. Իսահակյանի հետ, անգամ հղանում են գրական ընկերություն հիմնել:

1930 թ. Թեքեյանի ապրած մի քանի երջանիկ օրերը կապված են մանավանդ Շ. Շահնուրի ընկերակցությամբ անցկացրած փարիզյան շրջանի հետ, որի մասին վերջինս իր 1931 թ. օգոստոսի 19-ի նամակում ևս վկայում է՝ *«... անցեալ ամառուան պէս կրկին լաւ օրեր»* անցկացնելու բաղձանք հայտնելով¹:

Ոչ մի կերպ չուծելով իր առջև ծագած խնդիրները՝ 1931 թ. հունվարին Թեքեյանն արդեն որերորդ անգամ ստիպված է լինում վերադառնալ Կահիրե և նորից ստանձնել «Արեւի» խմբագրապետությունը: Թերթը հրատարակվում է մեծ դժվարություններով՝ *«... գրաշար, խմբագիր եւս կանոնաւորաբար չեն վճարուիր. ես՝ ամէնէն քիչ»* (էջ 324):

Որպէս ՌԱԿ-ից ընտրված պատգամավոր օգոստոսին նորից Փարիզ է մեկնում և մասնակցում այդ կուսակցության 5-րդ համաժողովին: Այստեղ մնում է երեք տարի և որպէս կենվոր բնակվում նախկին պոլսեցի Նշան Զոհրապյանի բնակարանում:

Թեքեյանը այն խոր համոզումն ուներ, որ սփյուռքահայությանը հայ պահելու միակ միջոցը գրականությունն է: 1931 թ. հուլիսին Շ. Շահնուրին գրած նամակում նա նշում է. *«Եկուր տես, որ մեր մեծերը հայ նպարավաճառութիւնը ազգապահպանման աւելի նպաստաւոր կը համարեն՝ քան հայ գրականութիւնը, որուն համար կը խորհին արդէն, թէ պէտքին չափ կայ...»* (ընդգծումը մերն է – Ա. Ա.) (էջ 328): Փարիզյան գրական կյանքը նույնպիսի դժգոհանք է առաջացնում Թեքեյանի մեջ, ինչպէս կահիրյանը, որը նա բնորոշում է *«ինքզինքէն վազ անցած պառաւ մը»*, անդարմանելիորեն *«չոր ու փոս»*: Նույնպիսի *«չոր ու փոս»* էր նաև Թեքեյանի թոքերում: Հազը սաստիկ էր դարձել ու ամենօրյա, վիրավոր աչքը նույնպէս մեծ անհանգստություններ էր պատճառում, այտուցված ձեռքերը գրելու դժվարություններ էին հարուցում: Թեքեյանին առաջարկվում է Հելիոպոլիսի (Եգիպտոս) Պերպերյան վարժարանի տեսուչի պաշտոնը, որը, սակայն, չի իրականացվում: 1932 թ. այն աստիճան է վատանում նրա աչքի վիճակը, որ ամռանը ստիպված է

¹ Տե՛ս **Շահնուր Շ.**, Նամականի, հ. 3, Վոթերթաուն, 2006, էջ 102:

լինում պառկել հիվանդանոցում: Այս ընթացքում Թեքեյանի «մէկ քանի» բանաստեղծություններ հունարեն թարգմանությամբ լույս են տեսնում Գուլիս Ալեքիսի կազմած «Հայկական մուսա» գրքում:

1933 թ. գարնանը Փարիզում, նախորդ գրքից 14 տարի անց, տպագրվում է Թեքեյանի «Սեր» ժողովածուն: Գրքի առաջին գրախոսողներից մեկը Վահե Վահյանն էր¹: Թեև Թեքեյանը այն միտքն է հայտնել, որ գրախոսը «մինչև յատակը իջած չէ», այնուամենայնիվ գոհ է մնացել հոդվածից և նրա հեղինակին ուղղված նամակում գրել՝ «ո՛րչափ բան խտացուցեր, ըսեր եւ լա՛ւ ըսեր էք...» (էջ 357): Գրքի լույսընծայումը որոշ ոգևորություն է հաղորդում բանաստեղծին, մղում անգամ կատակելու. «միտքս դրած եմ մինչև ամառ անպատճառ հարստանալ»: Բայց Փարիզի միակ հայկական գրախանութը երկու շաբաթվա ընթացքում վաճառել էր գրքի... ընդամենը երկու օրինակ: Մինչդեռ հեղինակը այն տպագրել էր Բուզանդ Թոփայանի տպարանում՝ պարտք մնալով նրան: Ակնկալվելիք գումարը այդպես էլ չի հավաքվում, որով Թեքեյանը մտադիր էր անտիպ բանաստեղծությունների մեկհատորյակ և արձակ գործերի մեկ ժողովածու հրատարակել:

Հեղինակի՝ թվով այս չորրորդ գիրքը ընդգրկում էր կյանքի ու մահվան, հավիտենականի ու անցողիկի, ապրելու ու երազանքի, մարդկային ներաշխարհի ու զգայնությունների դժվարալույծ բազում ոլորտներ, միննույն ժամանակ արտահայտում հեղինակի այն տվայտանքներն ու ապրումները, որոնք նա ունեցել էր հատկապես վերջին մի քանի տարիներին: Անչափ տարողունակ էր գրքին տրված վերնագիրը՝ «Սեր»: Սեր առ մարդը, կյանքը, կինը ու մանավանդ՝ ազգը:

1933 թ. Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցում նենգորեն սպանվում է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը: Թեքեյանը շատ ծանր է տանում այդ մահը, մանավանդ՝ ազգային պառակտման հողի վրա: Գրողը նորից է ներքաշվում (հատկապես Շ. Նարդունու կողմից) միջուսակցական պայքարների մեջ, գրում մի շարք սուր հոդվածներ ու խմբագրականներ:

1933 թ. հունիսին Փարիզում ստեղծվում է հոբեյանական հանձնաժողով՝ նշելու Թեքեյանի գրական գործունեության 40-ամյակը, ինչպես և մեծարելու «հանրային գործչին»: Տպագրվում է գրքույկ՝ «Յոբելեան Վահան Թեքեանի քառասնամեայ գրական գործունեութեան» վերնագրով: Թեքեյանը դժկամությամբ է ընդունում այդ նախաձեռնությունները: Պատճառը ոչ միայն այն իրողությունն էր, որ մի կողմից «վարձքը անյայտ, բեռը յայտնի ու ծանր» էր, մյուս կողմից էլ մտավախությունը, որ «ոմանք բանաստեղծը տօնելու արարքին մէջ» դնելու էին «հանրային գործիչը պարսաւելու դիտաւորութիւնը», այլև գրողի էության ծայրագույն անհավակնոտությունը, որի հետևանքով

¹ Տե՛ս «Միոն», Երուսաղեմ, 1933, սեպտեմբեր:

«իրեն տրուած պատիւէն ու փայփայանքէն» նա միշտ «նեղուել» է: 1934 թ. փետրվարի 10-ին Փարիզում, այնուամենայնիվ, հանդիսությունը տեղի է ունենում: Բանախոսությամբ հանդես են գալիս Ա. Չոպանյանը, Լ. Բաշայանը, Գ. Ֆեներճյանը, օրեր անց Թեքեյանին նվիրված միջոցառում է կայանում նաև Մարսելում: Հ. Օշականին ուղղված մի նամակում Թեքեյանն իր հոբելյանի առիթով գրում է, որ ինքն այլևս որևէ բանից հաճույք չի զգում, որի պատճառներից մեկն էլ «գրած լեզուիս շուտով կորսուելուն, պատմութեան անցնելուն համոզումը՝ որ մոխիրի համ կը դնէ ամենաքաղցր վայելքին մէջ անգամ» (էջ 373): Թեքեյանից անբաժան այդ զգացողությունն ըստ ամենայնի նրան 1942 թ. մղել է գրելու «Լեզուն որով գրեցի» ստեղծագործությունը:

*Լեզուն որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդէն ու պակսեցան անոնք ալ...*

Թեքեյանը իր շատ բանաստեղծություններ գրել է «ոտքի վրա» ճաշելու պէս: Գրելու համար չունենալով տարրական պայմաններ՝ ապրելու հոգսը նրան շատ հաճախ է այլ աշխատանքների տարել, որոնք ոչ միայն քայքայել են նրա առողջությունը, այլև խեղել հոգեկան աշխարհը, խոչընդոտել ստեղծագործական թռիչքները: Եվ պատահական չէ, որ տևական պայքարների, գրկանքների ու միայնության մեջ ապրող բանաստեղծը, խտացնելով իր ու իր նմանների այդ դառը վիճակը, «Տարակույս» բանաստեղծության մեջ գրել է.

*Դժոխք մեր կյանքը ըրինք՝ որ դուն դրախտ մը ըլլաս,
Ով Հայրենիք, անդունդին և երկնքին մէջ առկախ:*

Հոգնած ու հիասթափված լրագրության ապերախտ ասպարեզից՝ Թեքեյանը ստիպված էր մտնել մի ավելի հյուծիչ ոլորտ, որպիսին ուսուցչությունն էր: Որպէս տեսուչ և լեզվի ու գրականության ուսուցիչ՝ 1934-1935 ուսումնական տարում Թեքեյանն աշխատում է Կիպրոսի (Նիկոզիա) Մելքոնյան վարժարանում: Ո՛չ հոգեկան և ո՛չ էլ մասնագիտական առումով այն գոհացում չի տալիս, մանավանդ որ նա իրեն համարում էր «պատահական դպրոցավար մը»: Թեքեյանը դժգոհ էր ուսման նկատմամբ աշակերտության ցուցաբերած անտարբերությունից, իր վիճակից, որ ստիպված էր «գրականութիւն սորվեցնել տոմարակալութիւն սորվեցնելու պէս», մանավանդ որ Թեքեյանի շնչուղիները ավելի ու ավելի էին տկարացել և անհնարին դարձրել ամեն օր մի քանի ժամ դասախոսելը: Ուշագրավ է, որ վարժարանի սաների անտարբերության պատճառներից մեկն էլ Թեքեյանը համարում է իրենից առաջ Հ. Օշականի դասատվությունը, ով հայ գրականության նկատմամբ ցուցաբերել էր քննադատական ծայրագույն դիրքորոշում ու հիասթափեցրել իր ունկնդիրներին:

1934 թ. դեկտեմբերին Թեքեյանը ծանր հիվանդանում է: Նա դադարեցնում է դասատվությունը: Տարին ամուլ է եղել նաև ստեղծագործական

առումով: Գրելու բոլոր մղումները մնում են որպես ցանկություն: Այդ օրերի մասին նա գրում է. «... *ակոսներս սեղմելով զբաղած եմ ընդդեմ տեղին, գործին եւ օղին...*»: Եվ սա այն տարիքում, երբ Թեքեյանի խոսքերով ասած՝ «*մարդ պետք է կամ էական բաներ ընէ միայն, կամ ոչինչ չընէ*»:

1935 թ. աշնանը Թեքեյանը Կիպրոսից մեկնում է և վերջնականապես հաստատվում Եգիպտոսում: Նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, որը Շ. Շահնուրին գրած նամակում ձևակերպում է այսպես. «*Գահիրէ եւ, նորէն «Արեւ»-ին տակ, մէջը եւ վրան*» (էջ 394):

Ծրագրում է ամռանն այցելել Հայաստան, անգամ այն միտքն է հայտնում, որ կարող է «*դառնամ կամ չդառնամ*»: Թեքեյանի մեջ առաջացել էր մեծ մի վստահություն, որ Հայաստանը ոգևորելու, ուժ ու կորով է հաղորդելու, իր խոսքով ասած՝ «*լեցնելու*» է սփյուռքահայությանը, որի վերաբերյալ նա արդեն արտահայտվել էր 1925 թ. գրված «Հոն հեռուն, ահա» բանաստեղծության մեջ.

*Մենք քու գավակներդ,
Մրտով սիրակեզ
Ահա կուզանք քեզ...*

Այդ Հայաստանում կային մարդիկ (և նրանց թիվը գնալով մեծանում էր), որ սիրում ու գնահատում էին Թեքեյանին: Բնական է, որ Վահրամ Ալազանին գրած նամակում Թեքեյանը բաղձանք էր հայտնում՝ իր կյանքի վերջին տարիները ապրել «*Հայրենիքին մէջ, մեննիլ ու թաղուիլ անոր հողին տակ*», բայց և գիտակցում, որ այնտեղ հարկ էր ծառայել նաև իշխանություններին, մի բան, որը Թեքեյանը երբեք չէր համաձայնի, այն իշխանություններին, որոնք իրենց մամուլում նրան «*քուրժուա մտավորական*» էին համարում: Կապված շնչառության հետ՝ նորից է սրվում նրա առողջական վիճակը: 1935 թ. Հայաստան այցելած Անդրանիկ Անդրեասյանը Թեքեյանին ուղարկած իր նամակի մեջ դրել էր Հայաստանում հավաքած ծաղիկներ, որի վերաբերյալ հուսալիք Թեքեյանը գրում է. «... *դագաղիս վրայ դրուածի պէս կը տեսնեմ զանոնք*» (էջ 400):

1936 թ. Թեքեյանի մեջ կրկին ցանկություն է ծնվում «*երթալու Հայստան, էթէ ներէն նիւթական, առողջական ու հոգեկան պայմանները*»: Թեքեյանը կուսակցական գործերով կարճ ժամանակով այցելում է Բեյրութ: Իր կուսակից ու մտերիմ Միհրան Տամատյանի հորդորով Բեյրութում հիմնում և խմբագրում է «Զարթօնք» թերթը՝ չունենալով ո՛չ սրբագրիչ, ո՛չ գրաշար, ո՛չ թարգմանիչ և ո՛չ որևէ այլ աշխատակից: Մեկ ամիս խմբագրելուց հետո առողջության վատթարացման պատճառով Թեքեյանը մեկնում է Կահիրե, նախաձեռնում Ալեքսանդրիայում լույս ընծայել «Նօր հանդէս» գրական ամսագիրը, սակայն արտոնություն չի ստանում: Նորից է «Արեւի» «*լուծը դնում իր վզին*», որին ավելանում են «*կուսակցական փորձանքները*»՝ չստանալով հանդերձ իրեն հատկացված «*սովի թոշակը*», բայց պարտավորություն ունե-

նալով աշխատել «*օրական 9-էն 12 ժամ*» (թերթի մյուս երկու աշխատակիցները Միք. Կյուրճյանն ու Մաննիկ Պերպերյանն էին):

Միք. Կյուրճյանին ուղղված 1937 թվակիր նամակներից մեկում Թեքեյանը վկայում է, որ հազր անդադար ցնցում է կուրծքը, և ինքը չունի անգամ հասարակ «*ջերմոց մը*», որ կարդալիս կամ գրելիս տաքանա: «Արեւի» համարներից մեկում տպագրում է «Խորհրդային Հայաստանի գրականության մեծ վիշտը» հոդվածը, որտեղ վրդովմունք է հայտնում Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Ա. Բակունցի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ս. Արմենի և այլ գրողների նկատմամբ խորհրդային իշխանությունների կողմից հալածանքների ու արգելքների վերաբերյալ, ցավ հայտնում, որ երկրում վիճակն այնպիսին է, որ «... *կարելի չէ իշխանությանց սխալը իրենց երեսին տալ. պէտք է, աւա դ, միշտ ներում խնդրել եւ ոչ թէ արդարութիւն պահանջել*»¹:

Կարճ ընհատումից հետո՝ սկսած 1938 թ. հունիսից մինչև իր կյանքի վերջը, Թեքեյանը, տանելով հանդերձ գրկանքի բոլոր տանելի և անտանելի տեսակները (օրվա հացի խնդիր, խմբագրատան նկուղային հարկ, խառը ձեռագրերի ընթերցում և այլն), վարում է «Արեւի» խմբագրությունը՝ «*օրը օրին*» գրելով թերթի խմբագրականները, զուգահեռ խմբագրելով նաև «Արուեստ» թերթը: Ծրագրվող «պօտլեռեան» և այլ հեղինակներից կատարվող թարգմանությունների ժողովածուի լույսընծայումը չի հաջողվում: Բնական էր, որ վաթսուներեկ հասած բանաստեղծը հարց պիտի տար ինքն իրեն՝ արժի՞ շարունակել ապրել.

Պիտի ապրի՞մ ես վաթսուներեկ.

Պէտք կա՞ յ, պէտք կա՞ յ ապրելու...

Երբ որ փափաքն հոգիին մէջ կը հատնի՝

Ինչո՞ւ երթալ դեռ հեռու...

(«Պիտի ապրի՞մ»)

1939 թ. սկսված եվրոպական պատերազմը և դրա հետևանքով գրաքննադատության խստացումը, դրսից եկող թղթակցությունների սակավությունը ավելի են բարդացնում «Արեւի» հրատարակումը, որի վերաբերյալ Թեքեյանը գրում է. «... *ամէն առտու պարապի մը առջեւ եմ՝ գոր պէտք է լեցնել*»՝ թերթին հայեցի դեմք, գրական երանգ հաղորդելու և հետաքրքիր դարձնելու համար:

Միք. Կյուրճյանին 1940 թ. ապրիլին գրած նամակում Թեքեյանը ցավով նշում է. «... *ուժս պակասած է, բայց խմբագրատուն կու գամ կոր՝ որովհետեւ պէտք է գալ եւ պէ՛տք է սատկիմ այս գէշ օդին, գէշ օգնականներուն եւ գէշ գործին մէջ...*» (էջ 446): Իսկ հաջորդ տարվա դեկտեմբերին գրած նամակում խոսելով իր «*գէշէն գէշ*» վիճակի մասին՝ վկայում է. «*Երեկ իրիկուն երբ*

¹ Տե՛ս «Արեւ», Գահիրե, 1937, մայիս 29, 31:

խմբագրատունեն ելայ՝ հինգ վայրկեան մայթին եզերքը, մութին մէջ կեցած մնացի՝ երթալիք տեղս չգիտնալով, որքա՛ն մութ էին մտածումներս» (էջ 452): Մտածումները, իհարկե, շատ մութ էին, բայց «անժպիտ» Թեքեյանը շարունակում էր աշխատել ու ստեղծագործել և երբեմն անգամ դիմում երգիծանքի՝ իրեն ծանոթ կանանցից մեկին գրելով. «Հագս բնաւ աղէկ չէ... Կը վախնամ կոր, որ սիրտս կանգ պիտի առնէ... ոչ թէ մեկու մը, այլ ինքն իր վրայ...» (էջ 458): Իր այդ ծանր վիճակով հանդերձ՝ Թեքեյանը այս շրջանում ձեռնարկում է հիվանդանոցում գտնվող Շ. Շահնուրին օգնության հանգանակություն կազմակերպելը, ազգային ու կուսակցական ոլորտներում շարունակում ծավալել իր պայքարները: Նրա տրամադրությունը շատ թե քիչ բարձրացնող դրսևորումներից մեկը եղավ 1941 թ. «Արեւի» համարներում «Ամենօրեայ» վերնագրով պոնյակի բացումը, որը նա անվանեց իր «երկրորդ երիտասարդության պտուղները»: Բայց վիճակի էական փոփոխություն նրան չէր սպասվում: 1943 թ. գարնանը «Արեւ»-ի խմբագրատանը նա աղիների գալարում է ունենում, սրտի ցավեր, փոխադրվում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոց, ուր մնում է մի քանի օր: Գրողը սկսում է հազվադեպ այցելել խմբագրատուն: Նա ավելի ապրում է «երեկի ներկայութեամբ ընդդէմ այսօրւան», և Ֆիմի անունով մի դեռատի նամակագրի գրում, թե ինքը շարունակում է «փոխն ի փոխտառապել» անցյալով, ներկայով ու ապագայով: Այս առումով Թեքեյանը երգիծական մի ուշագրավ նկատում ունի, որը պարզում է տխուր իրականության հանդեպ նրա մտածողության սթափատեսությունը: Թեքեյանը գրում է, որ Ալեքսանդրիայում գտնված ժամանակ Միք. Կյուրճյանի հետ... զգուշանում էին «անցեալին վրայ խոսելէ, ապագային վրայ չկրնալով խոսիլ եւ ներկային մէջ խոսելու արժանի բան չգտնելով...», – և ապա շարունակում: – Այն տպավորութիւնը ունիմ, թէ իմ վերջալոյսիս տարիները կ'ապրիմ՝ որոնց լոյսը եթէ պակասած՝ քաղցրութիւնը աւելացած է: Բայց ասիկա կը պարտիմ մեծ մասամբ տխրութեան, չըսելու համար տառապանքին՝ զոր երիտասարդի եւ չափահաս մարդու այ սիրտս ապրած եւ թարգմանած է չափուած տողերով...» (էջ 471): «Չափուած տողերով» թարգմանել տառապանքը...՝ որևէ պոեզիայի համար ավելի լավ դժվար թե ասվի:

Թեքեյանի ապրած օրերը գնալով իհարկե ավելի ու ավելի ծանր էին դառնում, որին նպաստում էր նաև Կահիրեի դժվար տանելի տաք ու խոնավ եղանակը: Մեպտեմբերին կարճ ժամանակով լինում է Ալեքսանդրիայում, որի ծովափնյա օդը կազդուրիչ դեր է ունենում նրա առողջության վրա. «Չատ գէշ» չէր՝ «Չատ աղէկ չըլլալով հանդերձ»: Թեքեյանը մասնակցում է արտասահմանում ապաստանածների հայապահպանմանը սատար կանգնելու նպատակով ստեղծվող «Հայ ազգային հիմնադրամի» կազմակերպման աշխատանքներին: Գրողին առաջարկվում է ստանձնել Կահիրեի հայկական վարժարանների ուսումնական խորհրդի ղեկավարումը, սակայն նա չի համաձայնվում: «Արեւի» համարներում տպագրում է իր հուշերի շարքը,

ծրագրում դրանք լույս ընծայել առանձին գրքով: Այդուհանդերձ, Եգիպտոսի «հայկական կեանքին մթնոլորտը» «շնչելի» չի դարձնում նրա ապրած օրերը: Իրենց ազնիվ չեն պահում նաև Թեքեյանի որոշ բարեկամ-ընկերներ: Շուտով նա ընդհարվում է «Արեւի» տնօրենության ու կուսակցության որոշ ղեկավարների հետ և դադարում թերթին աշխատակցելուց: Նա հեռանում է նաև Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչությունից: Հրանտ Նասիրյանի նյութական աջակցությամբ 1943 թ. Գահիրեում լույս է տեսնում Թեքեյանի բանաստեղծությունների «Հայերգութիւն» ժողովածուն: Կյանքի հարուցած բազում դժվարությունների պատճառով Թեքեյանը տասը տարի գիրք լույս չէր ընծայել: Նրա այս հինգերորդ գիրքը միտում է մեր ժողովրդի անցած ճանապարհի հայելին դառնալ, նրա գոյակովի, հույսի ու հավատի, կորուստների և մանավանդ մարդկային ու ազգային մաքառումների արտացոլքը տալ՝ այդ նպատակը խտացնելով ժողովածուի առաջին «Վասն ձեր» բանաստեղծության հետևյալ տողերում.

*... Փառքն ու արհաւիրքը անցեալի,
Ներկայի շուարումը
Ու ապագայի տեսիլքը
Ժողուեցի մաս առ մաս
Վասն ձեր եւ բազմաց...:*

Ժողովածուի 132 բանաստեղծություններից 44-ը չէին ընդգրկվել նախորդ գրքերում, իսկ մի մասը լույս էր տեսել միայն մամուլում, կային և բոլորովին նոր գրված գործեր: Ժողովածուի առաջաբանում, որը վերնագրված է «Ազդ», Թեքեյանը իր գիրքը որակում է որպես «ազգային բնոյթ մը» ունեցող, նաև թարգմանը «... Հայ Ազգին կարճ ատենի մեջ ապրած հոգեկան աճումի եւ կորուստի, հրճուանքի եւ տառապանքի, յոյսի, անյուսույթեան եւ յետոյ դարձեալ յոյսի բոլորովին անօրինակ, իրեն միայն յատուկ կեանքը ու միանգամայն կ'արտահայտէ այդ կեանքին ներշնչած, հոս արուեստ դարձած ոգին»¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով 1944 թ. հունիսի 7-ին Թեքեյանը Գահիրեի գեղարվեստասիրաց սրահում ընթերցում է քերթողական իր վերջին մրմունջներից մեկը՝ ֆրանսերեն գրված «Հայաստանը-Ռուսաստանին»^{*} բանաստեղծությունը՝ Հայաստանը դիտելով որպես ապագա բոլոր կարելիությունների միջոց ու հիմք: Նույն ամռանը այցելում է Պաղեստին: Երուսաղեմում, Հոպպեում և Հայֆայում կազմակերպվում են հանդիպումներ ու հավաքույթներ, որտեղ մեներգվել են «Պոլիս», «Կ'անձրեւէ տղա՛ս», «Քու յիշատակդ այս գիշեր» բանաստեղծությունները: Գրողը պար-

¹ Թեքեյան Վ., «Հայերգութիւն», Գահիրե, 1943, էջ 3:

^{*} Կա այս բանաստեղծության նաև արևմտահայերեն տարբերակը՝ «Հայաստան առ Ռուսիա», որը թարգմանել է ինքը՝ հեղինակը (տե՛ս «Արեւ», 12-ը հուլիսի, 1944):

գևատրվում է Հայ երիտասարդաց միության «Բարերար անդամ» շքանշանով, վայելում Հ. Օշականի, Շ. Պերպերյանի և իր մի խումբ համակիրների ընկերակցությունը, գոհ մնալով իր ապրած այդ օրերից՝ նորից վերադառնում է Կահիրե և շնչարգելությունից ու պնդերակությունից բուժվելու նպատակով մեկնում Ալեքսանդրիա, շուրջ մեկ տարվա ընդմիջումից հետո վերսկսում իր ծանր աշխատանքը «Արեւում»: Բայց Թեքեյանը այլևս նման չէր ոչ նախկին «*ղազէթճիին*» և ոչ էլ բանաստեղծական նախկին «*յորդումներ կ'զգար կուրծքին տակ*»: Բազում մտածումներ ու ասելիքներ մեկընդմիջտ պիտի «*թաղուած մնային*» նրա մեջ: Հոկտեմբերի վերջերին գրված մի նամակում նա արձանագրում է. «*Կար չկար ծեր (Թեքեյանը 66 տարեկան էր այդ ժամանակ – Ա. Ա.) մարդ մը կար, որուն քերթող կ'ըսէին եւ որ վերջ ի վերջո, եկած էր, սիրած էր գալ նոյն համոզումին՝ բայց ոչ առանց տխրութեան, ծեր մարդ մը, ծեր քերթող մարդ մը հետեւաբար, որ խոր ծերութեան հասնելէ քիչ առաջ, թերեւս այդ համոզումին շնորհիւ՝ որ իր քերթուածներուն մէջ թափած սէրերէն ցոլքմը կը դարձնէր իրեն, զայն կը դնէր նախածքին, ձեռն ու ձայնին մէջ՝ որոնք իր խրտչոտ ու երկչոտ ըլլալովը, վերապահ ըլլալէ աւելի՝ գրեթէ կարծր ու չոր էին իր ամբողջ երիտասարդութեանն ու չափահասութեանն ալ աստենը*» (էջ 479) (ընդգծումը – Ա. Ա.):

Այսպէս, տարիների հեռվից գրեթե սպառնիչ բնութագրելով իրեն ու իր քերթողությունը, Թեքեյանը վերոհիշյալ տողերում նորից ու նորից է շեշտում այն անհուն տխրությունը, որ ուղեկցել էր իրեն ամբողջ կյանքի ընթացքում: Այդ տխրության պատճառները տարբեր էին, որոնցում հետին տեղ չէին գրավում Թեքեյանի շրջապատն ու մանավանդ նրան վիճակված միայնակ կյանքը. «*Չծուար է խնամող մը եւ տուն մը չունենալ մանավանդ: Առաջ այսպէս չէր բոլորովին. Ընտանիքի մը մէջ կ'այրէի (Թեքեյանը նկատի ունի ծանոթ ընտանիքում որոշ ժամանակ իր ապրելը – Ա. Ա.), մինչ հիմա սենեակի մը մէջ եմ միայն, երբ աւելի պէտք ունիմ հանգստի, հոգածութեան*» (էջ 484):

Ավելացնենք, որ նրա բնական «*սենեակները*» «*դամբանային*» եղան, իսկ կերած հացը՝ լեղի, որի պատճառով էլ նա իր արցունքների հետ իր այդ դատապարտվածությունն է, որ կուլ էր տալիս ու իրեն վիճակված կյանքի մնացած մասը ապրում «*կէս մը մանուկի եւ կէս մը ծերի վիճակով*»: Եվ գուցե հենց դրա համար էր նա իրեն հաճախ անվանում «*քարանձաւ*», «*աւերակ*», «*անապատ*», մի անապատ, որ գնալով «*աւելի չոր եւ ճնշիչ կըլլար*»:

Չնայած այս ամենին՝ Թեքեյանը երբեք չհեռացավ ազգային հոգու ու ցավերից, մնաց նվիրյալ ազգային խնդիրներին՝ միշտ հավատալով, որ պէտք է «*մէկդի նետել մտածումները եւ հաստատ կերպով... մղել ներկայ ամենօրեայ պատիկ պայքարները, որոնց յաղթական էլքով է՝ որ վաղը հնարաւոր պիտի ըլլայ... մեծ պայքարը...*» (էջ 482):

Այս ընթացքում Թեքեյանը «Արեւում» տպագրում է անստորագիր մի քանի սուր խմբագրականներ, որոնցից մեկն էլ «*Ի պատասխան հարեւաններ*

րու հանած անյարկի վիճակին»՝ նկատի ունենալով հակառակորդ կուսակցության օրգան «Յուսաբեր» թերթի որոշ հոդվածներ: Այստեղ է, որ չես կարող չհիշել Շ. Շահնուրի մի խոսքը. «Թշնամի եղբայրները ավելի թշնամի են, քան մյուսները»: Պայքարը ջլատիչ էր, և կարելի է ասել, որ բանաստեղծություններ գրելու ժամանակ գրեթե չէր մնում Թեքեյանի համար:

Միակ միախառնությունը դառնում է այն, որ նախորդ գրքի հովանավորի օգնությամբ լույս աշխարհի է գալիս հերթական ժողովածուն՝ «Տաղարանը», որին տրված նախնական վերնագրերը՝ («Հոգետուն», «Վերջին լույս», «Նոր սեր») արդեն ենթադրում էին, որ գրողը կատարում է մարդկային կյանքի ու սիրո տարաբնույթ եզրերի բացահայտումներ: Գիրքն իր ամբողջության մեջ, բացառությամբ գրողի առաջին՝ «Հոգեր» ժողովածուի, զիջում էր նախորդներին այն աստիճան, որ Հ. Օշականը այն համարեց Թեքեյանի «միակ մեղքը» սուրբ գրի դեմ: Եվ իրոք, մի շարք գործեր արհեստականության կնիքն ունեին, ներկայացվող ապրումներն ու հույզերը դրված էին կաղապարների մեջ, գեղարվեստական լուծումները աչքի չէին ընկնում թարմությամբ ու գրավչությամբ: Թեքեյանը թեև ստեղծում է ներքին տրամադրությամբ իրար հետ կապված մարդկային զգայնությունների որոշ ամբողջականություն, սակայն բանաստեղծությունների մի մասում պակաս են նրա պոեզիային այնքան բնորոշ խոսքի իմաստությունն ու բանաստեղծական խոհը, ասելիքի թանձրացումները, մտածման խորքայնությունը:

1945 թ. բանաստեղծական հունձք չբերեց Թեքեյանին և ոչ էլ առողջության կազդուրում: Տաք Եգիպտոսում, ուր, Հ. Օշականի խոսքերով ասած, «մարդուն միտքը կը լիկի», Թեքեյանը «կ'մրսեր»: Մրսում էր հոգով, մտքով, բայց մանավանդ շրջապատից բխող սառնությունից:

Շ. Շահնուրի բնութագրմամբ՝ «բարձր բարոյականի ջատագով», «միշտ վերապահ», «գերզգա» այդ մարդը ստիպված էր ամեն օր շփվել ազնվությունն ու մտավորականի հոգի չունեցող «շուկայիկ մարդոց» հետ: Եվ այդ ազնվական մարդը, որ վեր էր նաև իր կուսակիցներից, նույնքան դժբախտ էր իր անձնական կյանքում, որքան որ միայնակ էր հասարակական շրջապատում:

Թեքեյանը 1945 թ. սկզբներին ունենում է թոքի արյունազեղություն, սկսում է դժվարությամբ քայլել, առավել ևս դժվարությամբ գրել, անգամ կարդալու տկարություն զգալ: Մարտին նա պառկում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոցում: Ձեռքերի վերքերը և մանավանդ թոքերը ծայրագույն վատթար վիճակի էին հասել, հազը՝ այլևս անտանելի. «Մասնկ չարչարուելը՝ վ պիտի մեռնիմ. Մանկ շնորհքով հիւանդութիւն մը ըլլար, քեզ քանի մը օրեն առնող տանող... բայց ասիկա ... էօֆ...»¹:

Շուտով հիվանդի վիճակը այնքան է ծանրանում, որ բժիշկները

¹ Տե՛ս **Հակոբեան Ժ.**, Թեքեյան Վահան, Աստուածախոյզը, Գլենդել, 2009, էջ 216:

խորհուրդ են տալիս քիչ խոսել, իսկ ավելի ստույգ՝ պահանջում են *«բնաւ չխոսել»*: Թեքեյանը այլևս մահճակալին գամված մարդն էր, մենակ, քան երբևէ, և եթե չհաշվենք նրան *«ընկերակցող»* հիվանդությունները, կողքին չունէր ո՛չ հարազատներ, ո՛չ հոգատար ձեռքեր և ո՛չ էլ իր մտքին ու ձեռքերին այնքան տարիներ հավատարմորեն ծառայած գրիչը: Եղածը ընդամենը կարճ ժամանակով այցելած մի քանի համակիրներ էին: Բացակա էր նաև Տերը: Թեքեյանը այլևս մահվան անկողնում էր, ուր տեղափոխվել էր իր կյանքի ցավի անկողնուց, ու նրա ականջին չէր հասնելու սիրված երգի՝ Գ. Սրվանձոյանցի՝ Վարդանանց մահվանը վերաբերող գործը՝ *«իր գմայլելի բառերուն ու եղանակուն»*: Անօգնական մարդն էր նա՝ իր *«մի հատիկով»*, որը շուտով այլևս չէր բացվելու: Վերջիններից մեկը... *«Կմրսի՞ սիրտըդ, հայ քանաստեղծ...»*:

Մահվանից ընդամենը մեկ ամիս առաջ Թեքեյանը փայփայում էր այն միտքը, որ ամռանը Երուսաղեմ կայցելի: Չայցելեց: Ո՞ւր... ո՞ւր... եղեռնից մազապուրծ հայ քանաստեղծ:

Դեռևս 1914 թ. լույս տեսած իր «Հրաշալի Յարութիւն» ժողովածուում տպագրած «Երկու մահեր» քերթվածում Թեքեյանը տենչում էր իր մահվան երկու տեսակ՝ *«իրիկուն մը մարիլ»* գյուղական խրճիթի մեջ, ուր *«սէրը տիրէ»*, և կամ՝ *«Տարուիլ դաշտե ըր կողոյ, վրեժաբորբ, հըրաչուի»*: Բայց դժխեմ ճակատագիրը նրան թույլ չտվեց նման ելք ընտրել, թեև նրա ամբողջ կյանքը մարտադաշտից գրեթե չտարբերվեց:

1945 թ. ապրիլի 1-ին, որը Չատիկի տոն էր, փրկության, խաղաղության ու հույսերի տոն, այդ նույն հույսերով պարուրված, բայց և անհուսությամբ լեցուն հիվանդին քննելուց հետո բժիշկները եզրակացնում են, որ «Հույս չկա»: Արդեն երևում էին առաջին մահանշանները՝ դեմքի դեղնություն, անկանոն խոսք: Հիվանդը հաճախ էր խնդրում շուրթերը թրջել բամբակով ու ինքն իրեն հազիվ շշնջում՝ «սու՛... ու՛...», անգամ՝ բանավոր քանաստեղծություն անում. *«Հոգիս էր, հոգեակս կ'ուզես... Բայց հոգիս շուտ չեմ տար...»*: Շատ թե քիչ խնամք ապահովվելու համար Թեքեյանի մտերիմ, բժիշկ Շահեն Սևեռնյանը ապրիլի 2-ին հիվանդին տեղափոխում է իր տուն, սակայն մեկ օր հետո Թեքեյանը խնդրում է իրեն տանել Հելիոպոլիսի իր բնակած սենյակը (շենքի առաջին հարկում բնակվում էր Միքայել Կյուրճյանը), ուր նրան պետք է խնամեր վարձված օտար (ավստրիացի) հիվանդապահուհին: Այդ կիսադատարկ ու անկահույք սենյակը քանաստեղծի թափառական կյանքի ո՞ր երրորդ կայանն էր, ոչ ոք չի կարող ասել, բայց եղավ վերջինը: Իր գրած քանաստեղծություններից մեկում («Գեղջկական») Թեքեյանը երագում էր *«...ի մահ ընթանալ քիչ առ քիչ»*, սակայն այն իրեն շատ երկար սպասել չտվեց: 1945 թ. ապրիլի 4-ի վաղ առավոտյան՝ լույսը դեռ չբացված (4³⁰-ին), իր բնակած փոքրիկ սենյակում, գրողի կողմից այնքան *«սպասված»*, բայց երբեք չսիրված մահը այցելեց նրան ու... մարեց լույսը, այն լույսը, որ նրա կյանքի ընթացքում միշտ էլ կիսալույս էր եղել և շատ հազվադեպ լուսավորել նրա

ճամփան: Մահվանից առաջ Թեքեյանը խնդրել էր «պարզ թաղում»։ «արարողություն չեմ ուզեր, ծաղիկ չեմ ուզեր: Օ՛... մանավանդ ճառ չեմ ուզեր»¹: Հաշվի չառնելով գրողի փափագը՝ նրա աճյունը հաջորդ օրը տարվեց Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հուղարկավորողների մեջ սրտակից բարեկամները քիչ էին: Մեծ մասը նրանք էին, ովքեր անտարբեր ու անհոգ էին եղել Թեքեյանի նկատմամբ, երբ նա ողջ էր, անգամ կային մարդիկ, որոնց գրողը չէր հանդուրժել երբեք:

Թաղման արարողությունը եղավ գուսպ ու պարզ, տիրապետողը համատարած լռությունն էր: Թեքեյանի մարմինը ամփոփվում է Կահիրեի Մար Մինայի գերեզմանատանը՝ իր դժբախտ գրչեղբայրներ Արփ. Արփիարյանի և Եր. Օտյանի շիրիմների հարևանությամբ: Նոր կացարանը ոչնչով չէր տարբերվում նախորդներից. նույնքան մութ էր ու նույնքան միայնակ: Հետագայում Թեքեյանի աճյունը տեղափոխվեց Կահիրեի արվարձան Հելիոպոլիսի գերեզմանատուն՝ իր բարեկամ-գործընկեր Միհրան Տամատյանի շիրմի մոտ, ուր մինչև օրս էլ հանգչում են կողք կողքի՝ Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության երբեմնի նախագահն ու այդ կուսակցության երբեմնի ատենապետը: Կահիրեն իր շոգ հողի գիրկն առավ հայերեն խոսող ու հայերեն գրող ևս մի տարագիր հոգի: Տունդարձի ճամփաներ բացվելո՞ւ էին:

Կյանքից հեռացավ հայ գրականության մեծերից մեկը՝ անճարակ ու լքված հայ գրողը: Նա, ով ապրեց ու իր գրչով արտահայտեց հայ մարդու պանծացումներն ու փլուզումները, ով մասնակիցն ու ստեղծողներից մեկը եղավ արևմտահայ ու սփյուռքահայ գրականությունների լավագույն արարումների, ով անմնացորդ նվիրվեց իր ժողովրդի ոսկի տեսիլներին և արձանագրեց նրա «պայծառացած» պայքարները.

*Պզտիկ գիւղէ՛ր, դուք մեծցաք,
Անհունօրէ՛ն մեծցաք դուք՝
Երբ բնակիչ չունեցաք...*

*Ու ձեր այն Լեռը մեծցաւ,
Լեռն անծանօթ մշուշոտ
Պայծառացաւ, հայացաւ ի...*

(«Սուէտիա»)

Թեքեյանը իր ամբողջ կյանքի ընթացքում տուն չունեցավ, ու ինքը եղավ իր տունը, ընտանիք չունեցավ, ու ինքը եղավ իր ընտանիքը, զավակ չունեցավ, ու ինքը եղավ իր զավակը՝ իր երեք գրքերում զետեղած «Զավակս» վեր-

¹ Նույն տեղում, էջ 225:

նագրած երեք* Բանաստեղծություններով և միշտ մնաց «ծեր տղա» այն մանուկը, որ, ինչպես գրել է 1927 թ. հունվարի 18-ի «Արև» թերթում տպագրած իր մորը վերաբերող հոդվածում, միանգամից «պատանի եղաւ», տարօրինակ հուզումներով պատանի, ով նույնքան անսովոր տղա պիտի լիներ, որքան որ վաղ ծերացած այր: Նա կորցրեց նաև իր ծննդավայրն ու հայրենիքը և հար մնաց մխիթարության ու սփոփման կարոտ մտավորական մարդը, սիրվելու կարոտ մարդը, որ երբեմն սիրեց, բայց ոչ մեկից չսիրվեց ու իր ստեղծագործություններով հենց այդ իր մեծ կորուստներն է, որ երգեց ու իր ամբողջ կյանքով փաստեց դեռևս 1925 թ. գրված մի սունետի առաջին տողով՝ «Օնած օրէս մինչեւ այժմ՝ իմ Հայրենիքս ինձի հետ// Տարի ամէն տեղ...»:

Նրա կորցրած ու «կորսուող» հայրենիքը...

Իմ հայրենիքս, ա՛հ, ինչպէ՛ս դաւեց ինձի, խաբեց զիս...

Կը պահանջեմ մերթ իրմէ՛ հաշիւն անհուն իմ սիրոյս,

Իմ կորովիս վատնուած, իմ խորտակուա՛ծ երագիս,

Ու մերթ՝ ձեռքերս երեսըս գոցած կու լամ լացով մը անյոյս,

Պաղատելով որ ապրի՛, հոգ չէ թէ զիս մեռցուցան,

Եւ իր անոյշ մանուկնէ՛րը երջանիկ լոկ ըլլան...:

(«Մութ ժամեր»)

Թեքեյանն իր ուսերին կրեց նաև նահատակ հայ գրչակիցների կիսատ թողած գործի ծանրությունն ու իր ամբողջ կյանքով դարձավ սփյուռք դարձած անտունիների բոլոր ժամանակների հավերժական խորհրդանիշը:

Տախտակներու վրայ չոր, ձեղուններու տակ ցրտին

Չիմա սառող քովէ քով հայ որբերու ո՛րք ձեռքեր...

(«Որբերուն ձեռքերը»)

Նա՛ հոգին խռովյալ ու դեմքը միշտ տխուր մարդը՝ հայ գրականության հավերժական ներկա Վահան Թեքեյանը, ում կյանքն ու գործը, թերևս, կարելի է բնութագրել երկու բառով՝ պայքար և անկում: Ո՛չ կյանք, ո՛չ սեր, ո՛չ երջանկություն. այդ հենց նրա համար էր ասված: Այնուամենայնիվ Թեքեյանը երջանիկ եղավ, երջանիկ, որ Բանաստեղծ էր, ավելի ճիշտ՝ Թեքեյանը Բանաստեղծ էր և հենց դրա համար երջանիկ եղավ: Ե՛լք, ամեն գնով էլք. սա Թեքեյան մտածողի ու արվեստագետի ամենամեծ գերխնդիրը եղավ և դարձավ նրա կյանքի իմաստը, որ նպատակ ուներ օգնելու հայ մարդուն, որ նա միայնակ չմնա իր ցավերի հետ:

«Գիշերագնաց ճամբորդն էր ան, անստոյգ արահետին վրայ: Ոսկետառ անձնագիր մըն էր ան, թէ՛ւ պատառոտուն,– նրա մասին գրեց Շ. Շահնուրը և

* Ուշագրավ է, որ Փարիզից Ա. Տատրյանին ուղղված 1934 թ. մարտի 22 թվակիր նամակում Թեքեյանը խոսում է նաև չորրորդ «Զավակս» Բանաստեղծության մասին:

ավելացրեց. – ...*Թեքէան քար դրած էր իր սիրտին վրայ եւ անով չափած՝ անյատակ ողբերգութիւնը Հայուն*¹: Եվ իրոք, Թեքէանն իր մեջ կրեց իր ազգի ողջ տառապանքը և ինչ գրում էր իր մասին, նույնքան վերաբերում էր իր տառապակոծ ժողովրդին. «*Անդունդի մէջ ինկած ազգ, անդունդի մէջ հեղձամահ*»:

Ներդաշնակությունների բանաստեղծը, Կ. Չարյանի խոսքերով ասած՝ «*հայ գրականության ամենէն թանկարժէք դեմքերից մեկը*», Զ. Սյուրմեյանի բնութագրմամբ «*հայ բանաստեղծության իշխանը*», Ա. Չոպանյանի բառերով՝ «*խորախոհ բանաստեղծը*», իրենով մարմնավորեց արևմտահայ ու սփյուռքահայ մտավորականի ողբերգական ճակատագիրը և հենց այդ ճակատագրով հաստատեց հայ մարդու գոյատևելու վճռականությունը: Թեքէանի ապրած կյանքը արժեքավոր է նաև նրանով, որ այն յուրատեսակ փաստագրումն է նրա ապրած ժամանակաշրջանի: Հասարակական, մշակութային, գրական ու մանավանդ ազգային կյանքը ամենաճշգրիտ կերպով են արտացոլվել նրա ճակատագրում, և դեռ ավելին՝ այդ գործընթացների մի ահագին մասի կազմակերպիչն ու նախաձեռնողը ինքը՝ Թեքէանն է եղել:

Բանաստեղծ, արձակագիր (վեպ, պատմվածքներ, քրոնիկոններ, հուշեր), թատերագիր (նախատեսել էր անգամ չափածո թատերգություն գրել), երգի-ծագիր, խմբագիր, գրաքննադատ, հրապարակագիր, կուսակցական ու հասարակական գործիչ, ուսուցիչ, թարգմանիչ, նամակագիր (որոնց մեծ մասը ճանաչողական, պատմական ու գրական արժեք ունեն), երեսփոխան ու բարերար Վահան Թեքէանը հասցրեց վեց գիրք տպագրել: Նրա մի քանի գործեր հրապարակվեցին հետմահու՝ «Կեսարիա» օրագրություն-ուղեգրությունը, «Երկու դրախտները», որը պարունակում է նրա հողվածների մի մասը, Կահիրեի «Թեքէան ֆոնտի յանձնախումբի» վեցհատորյակում (նախատեսված էր 15 հատոր) լույս տեսած որոշ գործեր, այդ թվում «Եթէ տերը կամենայ» վեպը, «Հովհար հոգույ» (արձակ և ոտանավոր երգիծանք) և այլն: Սակայն մինչ այսօր առանձին հրատարակման են սպասում մամուլի տարբեր օրգաններում ցրված գեղարվեստական և ոչ գեղարվեստական նրա գործերը, «Ձօն եւ լալօն» (բանաստեղծություններ), «Յիշատակներ», թարգմանություններից Ժյուլ Ռնարի «Տունի հացը» դրաման, մի շարք պատմվածքներ, «Մանկութեան պարտեզէն» բանաստեղծությունների շարքը, որը իր բանաստեղծություններից մեկում համարում է «*իմ վեպը*», «Թրքահայոց մականունները» ուսումնասիրությունը, «Արեւանկարներ» դիմապատկերները, եվրոպական պոեզիայից կատարած թարգմանությունների մի մասը, Ս. Պարթևյանի հետ թատերախաղի վերածած՝ Արփ. Արփիարյանի «Կարմիր ժամուցը» և այլն:

¹ **Շահնուր Շ.**, Բաց տոմար, Փարիզ, 1971, էջ 52-53:

Թեքեյանը խմբագրել ու հրատարակել է նաև տասնյակ թերթեր՝ «Շիրակ», «Ազատ բեմ», «Հայրենիք», «Արևելք», «Արև», «Ժողովուրդի ձայնը» և այլն, թղթակցել և կամ աշխատակցել է «Արմենիային», «Ազատ խօսքին», «Լուսաբերին», «Հայկական սինեմային», «Անահիտին», «Ապագային», «Հաստատանին», «Մասիսին», «Ծաղիկին», «Մանգումեին», «Զարթօնքին», «Շանթին», «Ոստանին», «Վերջին լուրին», «Արևելեան մամուլին», «Դաշինքին», «Հայ գրականությունը», «Կոչնակին», «Պայքարին», «Ազգին», նաև զանազան տարեցույցների, որոնցում տպագրված նրա գրությունները ստորագրվել են ոչ միայն իր բուն անվամբ, այլև տարբեր ծածկանուններով՝ Բ. Կ. Մ., Սուրեն Տիրանեան, Վահան Տիրանեան, Վ. Տիրանեան, Վ. Տ., Ասուպ, Համշիրակ Բ., Սկայորդի, Իսկուհի, Հովեան, Խորեն, Տաթև, Հայր Վարդան, Խորեն Որոտում, Հովհաննես Կարապետ, Ասպատակ, Բիզմալիոն, Նշան Հարցական, Վեթօ Որոտում... , որոնք է՛լ ավելի են դժվարացնում տարբեր երկրներում, թերթերում ու հանդեսներում բազմացիր նրա ստեղծագործությունների հավաքումը, դրանով իսկ բարդացնում Թեքեյան գրողի, մարդու ու գործչի մասին սպառնիչ խոսք ասելը:

Բայց կա ու միշտ լինելու է ճանաչելի Թեքեյան գրողը, մարդն ու գործիչը, ում համար ամենադիպուկ բնութագիրը տվել է հենց ինքը՝ **«Մեկ հատիկս»**, որի բանաստեղծական բարձունքը ցավոք այլևս չհաղթահարվեց սփյուռքահայ և ոչ մի քերթողի կողմից:

Նկատի ունենալով իրեն վիճակված կյանքի ամբողջ ընթացքը՝ իր բանաստեղծություններից մեկում («Ապրի՛լ թե՛ ոչ, երազել») նա գրել է. *«Չառինք երազ մը կեանքէն, ու երազէն չառինք կեանք...»*:

Այդ անհաս երազի ու տենչված կյանքի խառնարանում էլ ապրեց ու արարեց մեծ բանաստեղծը՝ իր հեռու-մոտիկությունից դիմելով իր ժամանակակիցներին ու բոլոր նոր եկողներին. *«Այս պատմությունը, որ իմս է եւ որ քունդ է նույն ատեն»*:

Арцрун Авагян – Ваган Текеян: одинокий летописец (от Каира до Каира)

В 1922 г. Текеян уехал из Константинополя и был вынужден скитаться по десяткам стран мира (Греция, Франция, ближневосточные страны), однако основной период его жизни и деятельности пришелся на Каир. К прежним ранам и утратам добавились новые: народ оказался на краю пропасти, утрачивались национальные и культурные ценности. В 1933, 1943, 1944 гг. Текеян публикует новые сборники стихотворений, которые стали документальными хрониками прошлого и настоящего армян и которые обусловили высокий уровень поэзии диаспоры. В творческом и историческом плане период жизни Текеяна с 1922 по 1945 гг. характеризуется тем, что Текеян взвалил на свои плечи тяжесть труда, оставленного наполовину его собратьями по перу, ставшими мучениками. Текеян явился летописцем духа и судьбы бездомных диаспоры.

Artsrun Avagyan – *Vahan Tekeyan – the Lonely Annalist (from Cairo to Cairo)*

In 1922 Tekeyan left Constantinople and had to wander in dozens of countries around the world (Greece, France, Middle East countries ...) but Cairo remained the main scope of his life and activity until his death. Old wounds and losses were increased by the new ones, the nation was on the brink of extinction, assimilation had begun, and all the national and cultural values were lost. In 1933, 1943, 1944 Tekeyan published his new collections of poems, which became the documentary of the past and present of Armenian life and conditioned the high quality of the Diaspora poetry. From the creative and historical point of view, the period of Tekeyan's life from 1922 to 1945 was characterized by the fact that Tekeyan had to bear the burden of his martyred pen-friends' incomplete works and became the artistic annalist of the spirit and fate of the Diaspora Armenian homeless.